ՄՀԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1982 թ. նոյեմբերի 26–ին Կապանում:

2004–2009 թթ. սովորել և ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, ապա ասպիրանտուրան:

2009 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի աստիճան:

2012 թ. ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրենն է:

2012 թ.՝ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտական քարտուղար:

2010 թ.՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնի ասիստենտ:

2009 թ.՝ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժնի վարիչ:

Հեղինակ է վեց գիտական հոդվածների, մեկ բուհական, մասնագիտական–ուսումնական ծրագրի: Մասնագիտական հետազոտությունների դաշտը ներառում է 20–րդ դարի 2–րդ տասնամյակի ժամանակահատվածում Հայաստանում ու ընդհանրապես Հարավային Կովկասում և Ռուսաստանում Հայ հեղափոխական դաշնակցություն և ՌՍԴԲ(բ)Կ, Մուսավաթ կուսակցությունների միջև տեղ գտած հարաբերությունների, 1917–1918 թթ. Բաքվում տեղի ունեցած քաղաքական զարգացումների և ազգամիջյան հարաբերությունների պատմությունը, ինչպես նաև զբաղվում է հայագիտության համացանցային քարոզչության խնդիրներով:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի արդյունավետության համար մշտապես կարևորվել է անաչառ տեղեկատվական քարոզչության խնդիրը: 20–րդ դարի տեղեկատվական քարոզչություն իրականացնող պաշարներին՝ տպագիր մամուլին, ռադիոյին և հեռուստատեսությանը, արդի փուլում եկավ լրացնելու, հնարավոր է նաև փոխարինելու, ավելի մատչելի և արագահաս մի նոր տեղեկատվական համակարգ՝ **Համացանց** անունով: Միայն 2012 թ. տվյալներով համացանցից օգտվողների թիվը կազմում է ավելի քան 2,4 մլրդ[1]: Համացանցի տեղեկատվական քարոզչության առաջատարի դիրքերը զբաղեցնելու փաստի տրամաբանությունից ելնելով՝ Հայոց ցեղասպանության թե՛ ճանաչմանը, թե՛ ժխտմանն աջակից կողմերը վերջին 5–6 տարիների ընթացքում առավել ակտիվ աշխատանքներ են տանում համացանցում՝ փորձելով զանազան բնույթի կայքերի միջոցով լուծելի դարձնել իրենց առջև ծառացած տեղեկատվական քարոզչության խնդիրները: Հետաքրքիր է, որ այս դաշտում ադրբեջանական կողմը տեղ–տեղ ավելի ակտիվ քայլեր է ձեռնարկում, քան թուրքական կողմը:

Խնդրի բոլոր կողմերը հասկանալու համար ստորաբաժանենք Հայոց ցեղասպանությունը ներկայացնող կայքերը չորս հիմնական խմբերի:

---

1. Տե՛ս http://www.internetworldstats.com/stats.htm?loc=interstitialskip

Առաջին խմբի մեջ են մտնում այն կայքերը, որոնք լրատվական բնույթի քարոզչություն են իրականացնում (ինչպես, օրինակ՝ հայկական «www.panarmenian.net»[2], «www.panorama.am»[3], «www.aztagdaily.com»[4], «www.news.am»[5], թուրքական «www.hurriyet.com.tr»[6], «www.milliyet.com.tr»[7], «www.zaman.com.tr»[8], ադրբեջանական «www.azernews.az»[9], «www.today.az»[10], վերջինիս բաղկացուցիչ մաս կազմող «www.day.az»[11] և «www.milli.az»[12], այդ թվում նաև եվրոպական և ամերիկյան մի շարք լրատվական կայքեր): Այս խմբին պատկանող կայքերի տեղեկատվական դաշտը ամենից ակտիվն ու նպատակայինն է, բայց և միևնույն ժամանակ տեղեկատվության խորքային ներազդման և երկարակեցության առումով առավել արագ կիրառությունից դուրս մղվողը: Այստեղ Հայոց ցեղասպանության խնդիրը հիմնականում արծարծվում է արդի փուլի զարգացումների շուրջ: Նման կայքերը հաճախ չեն հանդիպում համացանցի որոնողական համակարգերի այն էջերում, որոնց հղում–որոնման արտահայտությունը «Հայոց ցեղասպանություն» է:

Երկրորդ խմբի մեջ կարելի է ներառել պետական կառույցների, միջազգային և հասարակական–քաղաքական կազմակերպությունների պաշտոնական կայքերը: Վերջին շրջանում այս խմբում, իհարկե որոշ վերապահումներով, հայկական կողմի կայքերի որակական առաջընթաց ենք արձանագրում: Այստեղ տեղ գտած տեղեկատվությունը ավելի պաշտոնական ձևաչափ է կրում և համեմատաբար ընդհանրական է ներկայացված՝ համադրվելով լինելով պետական կառույցների կայքերի պահանջներով: Որպես օրինակ նշենք, որ Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլի պաշտոնական կայք[13] որոնման դաշտում «Հայոց ցեղասպանություն» արտահայտությունը թուրքերեն և անգլերեն փնտրել տալիս ներկայացվում են միասին վերցրած ավելի քան երեք տասնյակի հասնող նյութեր, որոնց միայն 70%–ն է անդրադառնում հիշյալ խնդրին, այն էլ, մեծ մասամբ, Ֆրանսիայի օրենսդիրների շրջանակում Հայոց ցեղասպանության շուրջ ծավալվող վերջին զարգացումների վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական կայքի պարագայում վիճակը այլ է: Այստեղ ոչ միայն հայ–թուրքական հարաբերությունների շուրջ ՀՀ նախագահի առկա ելույթներն ու նորությունների քաղվածքներն են պատշաճ կերպով ներկայացված, այլ կայքի «Հայաստան» բաժնում առանձին «Ցեղասպանություն» վերնագրով ենթաբաժնում ներկայացված նյութի մեջ հիմնարար հարցադրումներով տրված է Հայոց

---

2. http://www.panarmenian.net/
3. http://www.panorama.am/
4. http://www.aztagdaily.com
5. http://www.news.am/
6. http://www.hurriyet.com.tr/anasayfa/ — թուրքերեն
   http://www.hurriyetdailynews.com/
7. http://www.milliyet.com.tr/2010/04/18/index.html
8. http://www.zaman.com.tr/;http://www.todayszaman.com/tz–web/
9. http://www.azernews.az/site/
10. http://www.today.az/
11. http://www.day.az/
12. http://www.milli.az/
13. Տես http://www.tccb.gov.tr/

ցեղասպանության պատմությունը, որը հասանելի է նաև ռուսերենով և անգլերենով[14]: Որակական առումով լուրջ զարգացում ենք արձանագրում ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքում: Այստեղ «Արտաքին քաղաքականություն» բաժնի «Ցեղասպանության ճանաչում» ենթաբաժնում բավականին հիմնավոր կերպով երեք բաժիններով՝ «Ցեղասպանություն», «Ճանաչում», «Մշակութային եղեռն», ներկայացված է Հայոց ցեղասպանության թեմատիկան՝ կից էլեկտրոնային գրականությամբ և թեմային անդրադարձող հայկական հիմնական կայքերի հղումներով[15]:

Երրորդ խմբի մեջ կարելի է դիտարկել բլոգները[16], համացանցային ֆորումներն ու սոցիալական ցանցի այն կայքերը, որտեղ տեղեկատվության ծավալը շատ չէ, իսկ բովանդակությունը՝ հիմնականում ոչ մասնագիտական: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ վերջին վեց տարիների ընթացքում այս դաշտում ևս երկու կողմերի համար էլ ակնհայտ փոփոխություններ են նկատվում: Օգտագործելով բլոգ համակարգի ընձեռած տեղեկատվության ազատ տեղադրման և խմբագրման հնարավորությունները՝ թե՛ հայ, թե՛ թուրք և թե՛ ադրբեջանցի բլոգերները ստեղծել են այնպիսի բլոգներ, որոնցում առկա են և՛ գրադարաններ՝ ազատ ընթերցման նյութերով, և՛ տեսադարաններ՝ ֆոտո և վիդեո դիտելու ազատ հնարավորությամբ: Այս բլոգային և սոցիալական ցանցերի հարթակները արագ թարմացվում են և ավելի հաճախելի են, քան նախորդ երկու խմբերի կայքերը: Նման հարթակներից կարելի է հիշատակել «wordpress.com»–ում ներկայացվող «armeniangenocideblog.wordpress.com»–ն[17] ու «blogspot.com»–ում ներկայացվող «armenians–1915.blogspot.com»–ը[18]: Սակայն մյուս կողմից էլ այս խմբի հարթակները հեղինակային կամ «ծագումնաբանության» առումով բավականին քողարկված են ներկայացվում. այս մասին փաստում է նրանցում առկա նյութերի բովանդակային մասը: Օրինակ՝ նույն armenians–1915.blogspot.com բլոգում նյութերի այնպիսի մի փունջ է ներկայացված, որ շատ հաճախ վիճարկելի է դարձնում բլոգի հայամետ լինելու հանգամանքը: Ուստի այս առումով նման բլոգները ընդհանուր առմամբ կորցնում են իրենց գրավչությունը՝ տեղ տալով Հայոց ցեղասպանության խնդրին անդրադարձող վերը նշված առաջին երկու և վերջին՝ չորրորդ խմբերի՝ գիտական կամ գիտահանրամատչելի կայքերի բլոգ հարթակներում և սոցիալական ցանցերում առկա պաշտոնական էջերում:

Չորրորդ՝ առավել հաճախելի խմբի մեջ ներառել ենք բոլոր այն կայքերը, որոնց ներկայացված տեղեկատվությունը ավելի խորքային է և համապատասխանում է գիտական կամ գիտահանրամատչելի նյութի որակավորմանը: Նման կայքերը հեղինակային երկու հենքեր ունեն: Մի դեպքում՝ դրանք ներկայացնում են գիտական, հասարակական–կրթական կազմակերպություններ, իսկ մյուս դեպքում՝ առանձին անհատներ: Նման կայքերի պատրաստման և գրագետ ներկայացման

14. Տե՛ս http://www.president.am/hy/genocide/
15. Տե՛ս http://www.mfa.am/hy/what–is–genocide/
16. Տե՛ս http://www.7or.am/blog/?p=1805
17. http://www.armeniangenocideblog.wordpress.com/
18. http://www.armenians–1915.blogspot.com/

մրցավազքում հայկական կողմը հետզհետե շրջանցում է հակադիր կողմին: Այս հարցում առավել խոսուն են մեր կողմից համացանցի ամենատարածված որոնման համակարգերում և որոնման համակարգ ունեցող պորտալներում, ինչպիսիք են, օրինակ, «bing.com»–ը, «google.com»–ը, «rambler.ru»–ը, «yahoo.com»–ը, «yandex.ru»–ը, իրականացրած մոնիտորինգները: Հիշեցման կարգով նշենք, որ դրանցից օգտվելիս այցելուների մեծ մասը հիմնականում դիտում է հղված բառի արդյունքի առաջին էջի հղումները, որոնք էլ այնտեղ են հայտնվում որոնողական համակարգերի կողմից հաշվառվող տվյալ հղման և բառի որոնման համադիր այցելության շնորհիվ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ մենք հիմնականում դիտարկել ենք բոլոր նշված կայքերի առաջին էջերը: Որոնման են տրվել «Հայոց ցեղասպանություն» արտահայտության անգլերեն (armenian genocide), ռուսերեն (геноцид армян), թուրքերեն (ermeni soykirimi) տարբերակները: Արդյունքում համացանցի հիշյալ հինգ որոնողական կայքերից ստացված, հաճախ կրկնվող 150–ից ավելի հղում–արդյունքներից միայն 20–ն են հակահայկական բնույթի (թուրքական կայքերից՝ www.ataa.org – «Թուրք–ամերիկյան ասոցիացիաների ասամբլեա» (Assembly of Turkish American Associations), www.eraren.org – Անկարայում գտնվող Հայկական Հետազոտությունների Ինստիտուտի (Institute for Armenian Research) պաշտոնական կայքը, www.ermenisorunu.gen.tr – Հայկական հարցը, մասնավորապես Հայոց ցեղասպանությունը «ուսումնասիրող գիտնականների» հակահայկական նյութերը ներկայացնող թուրքական կայքը, www.tallarmeniantale.com – խնդրո առարկայի վերաբերյալ ձևականորեն բռնել է երկու կողմերի կարծիքները ներկայացնող դիրքորոշում, այնինչ իրականում այն ներկայացնում է հիմնականում թուրքական տեսակետը, www.ttk.org.tr– Թուրքական պատմական ընկերության (Turkish Historical Society) պաշտոնական կայքը, ինչպես նաև ադրբեջանական կայքերից՝ www.azerigenocide.org – «ադրբեջանցիների՝ հայերի կողմից իրականացրած ցեղասպանությունը» և միաժամանակ նաև Հայոց ցեղասպանությունը «ուսումնասիրող գիտնականների» հակահայկական նյութերը ներկայացնող ադրբեջանական կայքը, www.irs–az.com – «IRS–Ժառանգություն» ադրբեջանական ռուսալեզու ամսագրի համացանցային տարբերակը, որտեղ առկա են Հայոց ցեղասպանության փաստը ժխտող, հակահայկական բազմաթիվ հոդվածներ, www.karabakh–doc.azerall.info – Ղարաբաղյան հակամարտության շրջանակներում նաև Հայոց պատմության և մասնավորապես Հայոց ցեղասպանությունը «ուսումնասիրող գիտնականների» հակահայկական նյութերը ներկայացնող ադրբեջանական կայքը), իսկ մնացածը հայամետ են (հաճախելիության չափորոշիչով առավել հայտնի են Հայոց ցեղասպանության թեմային անդրադարձող ռուսալեզու www.genocide.ru, Հայկական ազգային ինստիտուտի (Armenian National Institute) www.armenian–genocide.org, եռալեզու գիտահանրամատչելի պաշար պարունակող www.armenocide.net, շվեդերեն և անգլերեն բաժիններից բաղկացած www.armenica.org, Դանիայում գրանցված և թուրքալեզու նյութերով համեմված հայամետ www.ermenisoykirimi.net, «Մեր Արարատ» խորագրով հանդես եկող www.ourararat.com, հայկական դոմեյն տիրույթում գրանցված www.genocide.am, Հայոց ցեղասպանության վերաբերյալ անգլերեն նյութերի մեծ պաշար պարունակող www.genocide1915.info և Արգենտինայում գրանց-

ված իսպանախոս լսարանի համար առավել ընդգրկուն www.genocidioarmenio.org կայքերը): Հետաքրքիր մի փաստ ևս. որոնողական համակարգերում Հայոց ցեղասպանության խնդիրները ներկայացնող հայամետ առաջատար կայքերի ճնշող մեծամասնության հեղինակներն ու սպասարկողները անհատներ են կամ ոչ մասնագիտական խմբեր: Ողջունելով նման փաստը՝ այնուամենայնիվ, կարծում ենք, որ խնդրի առավել արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է էլ ավելի մեծացնել հարցի պետական մասնակցության չափաբաժինը: Այս առումով ողջունելի է Հայոց ցեղասպանության 100–րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի 2012 թ. սեպտեմբերի 20–ին կայացած երկրորդ նիստի ժամանակ հանձնաժողովի պաշտոնական կայքը գործարկելու մասին հայտարարությունը[19], որը, հուսով ենք, յուրօրինակ առումով նաև համացանցային դաշտը համակարգող դրոշակակիրը կարող է դառնալ:

Մյուս կողմից՝ չորրորդ խմբի մեջ առանձին տողով անհրաժեշտ է նշել ՀՀ–ում Հայոց ցեղասպանության խնդրով ուսումնասիրություններ կատարող գիտահետազոտական կառույցների՝ ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտի (www.genocide–museum.am) և ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի (www.armeniansgenocide.am) խնդրո առարկան ներկայացնող կայքերի վերաբերյալ: Եթե Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտի դեպքում մենք արձանագրում ենք առաջին հերթին Հայոց ցեղասպանության շուրջ առկա հոդվածների ձևաչափով հիմնարար նյութերն ու նորությունները, ապա Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի Հայոց ցեղասպանության թեմային անդրադարձող կայքի պարագայում հանրագիտարանային տվյալներին զուգահեռ կարող ենք արձանագրել նաև օգտատերերին հասանելի էլեկտրոնային գրքեր: Այս առումով կայքերը գալիս են միմյանց լրացնելու:

Ի մի բերելով մեր դիտարկումները՝ կատարենք մի շարք եզրահանգումներ:

- Թեմայի շուրջ առկա հայկական կայքերն ուղղորդելու և հայամետ կայքերի հետ դրանց համատեղ աշխատանքի արդյունավետությունն ավելի բարձրացնելու համար անհրաժեշտ ենք համարում մեկ բազմաֆունկցիոնալ կենտրոնի ձևավորումը: Ինչը կարծես թե նշմարվում է հիշյալ կառավարական հանձնաժողովի գործունեության մեջ:
- Չնայած այն հանգամանքին, որ հակադիր կողմի համացանցային պաշարներում այսօր բավականին քիչ թվով հասանելի էլեկտրոնային գրականություն կարելի է գտնել, այնուամենայնիվ, առկա հայամետ կայքերում ոչ միայն օտարալեզու, այլև նույնիսկ հայալեզու գրականության հասանելի էլեկտրոնային տարբերակների պակաս է նկատվում: Չպետք է մոռանալ, որ նյութը ազատ ընթերցելու հնարավորություն տվող կայքը ավելի արդյունավետ է իրականացնում իր քարոզչական առաքելությունը: Այս առումով ողջունելի է վերջին շրջանում ԵՊՀ ՀՀԻ և ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի կողմից իրականացվող թվայնացման գործընթացը, որը հետզհետե գալիս է լրացնելու վերոնշյալ բացը:

19. Տե՛ս http://www.genocide–museum.am/arm/20.09.2012a.php

- Հաջորդը համացանցում ներկայացվածության փոխօգնության հարցն է: Շատ հաճախ օգտատերը, մտնելով որևէ կայք, փորձում է նրա «Հղումներ» բաժնից նույն թեմայի վերաբերյալ նոր կայքեր գտնել: Ուստի կարևոր է ոչ միայն խնդրո առարկայով զբաղվող հաստատությունների կայքերում փոխադարձ հղման մշակույթը զարգացնել, այլ նաև պետական և լրատվական առավել շատ հաճախելիություն արձանագրած կայքերում նման հղումների թիվն ավելացնել:

Ամփոփելով նշենք, որ ոլորտի չափազանց մեծ տեղեկատվական ծավալների և դրանց կիրառման լայն դաշտում առաջատարի դիրքերը զբաղեցնելու համար ամենաիրատեսական ուղին միայն համակարգված աշխատանքն է: